

Եռամիասնություն

Ուժեղ ու հպարտ Հայաստան

Վերահաստատում ենք մեր պատրաստակամությունը՝ միասնաբար և փոխադարձ պատասխանատվությամբ, մարդկային, նյութական և հոգևոր ներուժի համախմբմամբ առավել ամրապնդելու եռամիասնությունը՝ այն ուղղորդելով Հայաստանի, Արցախի հզորացմանը՝ ասվում է Հայաստան-Սփյուռք համաժողովի ընդունած հայտարարությունում: ՀՀ անկախության առթիվ մեր երկրի ղեկավարները, համաժողովի մասնակիցներն այցելել են Եռաբլուր:



N 35 (683)
22-28.09 2017



911

Արևմտյան թերթ



ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF EMERGENCY SITUATIONS OF RA
МИНИСТЕРСТВО ПО ЧРЕЗВЫЧАЙНЫМ СИТУАЦИЯМ РА

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐ

Սեպտեմբեր 21

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 26-ՐԴ ՏԱՐԻՆ

Անցած օրերում շատ բան է փոխվել մեր հայրենիքում: Անցել ենք առաջընթացի, նաև հետընթացի ճանապարհ: Անցել ենք Արցախյան պատերազմի միջով: Դժվարությունները շատ են, առաջընթացը դյուրին չէ: Մենք դեռ յուրացնում ենք անկախ պետակա-

նություն ունենալուց բխող հնարավորությունները, բացահայտում գործակցության մոր հորիզոններ՝ աշխարհի տնտեսական քարտեզում մեր տեղն ունենալու վճռակետությամբ: Վարչապետ Կարեն Կարապետյանի դիտարկումն է: Այս օրերին համահայկական գործերով Հա-

յաստանում էին 70 երկրների 1400 մեր հայրենակիցներ՝ մասնակցելու Հայաստան-Սփյուռք 6-րդ համաժողովին: Միակարծիք էին բոլորը՝ Հայաստանը լինելու է աշխարհին ինտեգրված, ուժեղ ու հպարտ երկիր:

Կարևոր

ԶՊ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ



Էջ 2

ԱՐԱՐԱՏԻ ՄՅՈՒՍ ԿՈՐԱՄՈՒՍ



Էջ 3

ԱՌՆ ՄԻՖԱԳԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ ԵՐԵՎԱՆՈՒՄ



Էջ 4

ԱՐՏԱԿԱՐԳ ՕՐԵՐ ԱՐՑԱՒ-ԵՐԵՎԱՆ ԵՆԱԿՊԱՐԳԻՆ



Էջ 6



Խնդրազրկան ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Ուժեղ ու հպարտ երկիր դառնալու ուղիներն էին քննարկվում Հայաստան-Սփյուռք համաժողովում: Մեր նավը լեռներից բաց ծով նավարկության դուրս բերելու քննարկումներին մասնակցում էին մեր շատ հայրենակիցներ՝ մտահոգ համահայկական գործերով: Համաժողովում մեծ համախմբում կար ու գործ: Բացահայտվեցին մեր իրողություններ ու կիրառելի հնարավորություններ: Հաստատագրվեց, որ մեր երկիրն այսօր ունի զարգացած ՏՏ ոլորտ և ունակ է ստեղծելու մեծանշանակ գիտական արտադրանք: Նշվեց, որ գիտական հոդվածներով շատ ավելի առաջ ենք Արևելյան Եվրոպայի երկրներից և դրանց ազդեցությամբ 40-րդն ենք աշխարհում: Շեշտվեց, ստեղծում ենք գիտական արդյունք, բայց և շատ վատ ենք առևտրայնացնում դրանք: Իսկ դրա համար պետք է մեծացվի հետազոտությունների թիվը, որը կբերի մշակումների կատա-

րելիության: Հաջողություններ ունենք արդեն սեփական ռազմարդյունաբերական համալիրը զարգացնելու ուղղությամբ, մշակումներ արդեն կան, ինչը թև է տալու երկրի զարգացմանը, երաշխիքն է խաղաղության, իսկ դրան հասնելու միակ ճանապարհը ուժեղ ու հպարտ երկիր ունենալն է: Ավաղ, ժողովրդագրական միտումները մեր երկրում խիստ մտահոգիչ են: «Մեր նպատակն է, որ Հայաստանը 2040-ին ունենա առնվազն 4 մլն բնակիչ», - համաժողովում հայտարարեց նախագահ Սերժ Սարգսյանը և կոչ արեց համահայկական քննարկման «4 միլիոնանոց Հայաստան» ծրագրի իրագործմանը հասնելու համար: «Կարծում են, որ հատուկապես ենք հայրենադարձության կազմակերպման համար: Հայաստանում ստեղծված են գործարարությամբ զբաղվելու, շահույթ ստանալու, երկիրը շենացնելու բոլոր պայմանները: Վստահ են, որ

Սփյուռքի և Հայրենիքի ներուժի շարունակական բացահայտման ջանքերը մեր լիցք կստանան Համահայկական խորհրդի ձևավորմամբ», - հավաստիացրեց նախագահը: «Պետք է մեջքներս ուղղենք և միասին շարունակենք այն գործը, որը սկսել ենք՝ կառուցելու այն երկիրը, որի մասին երազում ենք, երկիր, որ ամեն օր արթնանում է մի նոր բան արարելու, զարգացնելու, ավելացնելու՝ իր գերազույն արժեքի՝ մարդու համար: Մեզ պետք է առաջադեմ և զարգացած երկիր, որը կունենա ձգողական ուժ: Երկիր կառուցելը ոգևորիչ նպատակ է, որի շուրջ պարտավոր ենք համախմբվելու», - իր ելույթում մատնանշեց վարչապետ Կարեն Կարապետյանը: «Մենք ուզում ենք, - ասաց նա, - որպեսզի սփյուռքի գիտության և մշակույթի գործիչները, կառավարիչները մասնակիցը դառնան երկրում ընթացող բարեփո-

խումների՝ կառավարման մեր մշակույթ բերելու, սփյուռքի մեր լավագույն մասնագետների գիտելիքն ու ներուժը համահայկական նպատակներին ծառայեցնելու»: Եվ հանդիմանեց «Ինչո՞ւ ուրիշները կարող են, իսկ մենք՝ ոչ»: Կարող ենք: Եկել է ժամանակը կառուցելու մեր երազած երկիրը, որը կպահպանի եղածը, տուն կբերի կորցրածը: Որ էլ չլսենք Արամ կաթողիկոսի դառնադրոշմ, իրապաշտ ու անկեղծ խոսքը. «Հայաստանը կպարտվի, իսկ Սփյուռքը կմաշի»: Այլ տարբերակ չունենք: Սուղ է ժամանակը: Հայի ստեղծարար միտքը Հայրենիքում պիտի բյուրեղանա, կյանքն այստեղ օրինապաշտ ու կազմակերպված պիտի լինի: Հայրենադարձե՛ք՝ որպես քաղաքացի, որպես զինվոր, որպես լույս ու միտք տվող հայ: Համահայկական գործեր շատ ունենք: ■

Գագիկ ԵՂՅԱՆ



ՄԱԿ-ի անբիռնից

Հայաստանը 2009-ին կնքված Ցյուրիխյան արձանագրությունները հայտարարելու է առ ոչինչ: «Անկարան անհեթեթ նախապայմաններ է առաջ քաշում դրանք վավերացնելու համար, որոնք, բնավ, չեն բխում արձանագրությունների տառից և ոգուց... Հայաստանը շարունակում է համոզված լինել, որ հարևան պետությունները պարտավոր են հիմնել և վայելել կանոնավոր հարաբերություններ», - ասել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը:

Հատակեցվում են կարգավիճակն ու իրավասությունները

Կառավարությունը հաստատել է «Ամենօրյա գործունեության ժամանակ արտակարգ իրավիճակների և ճգնաժամների առաջացման դեպքում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնում պետական կառավարման մարմինների ներկայացուցիչների աշխատակարգը, խնդիրներն ու գործառնությունները»:

2012-ին ԱԽ հայցով յուրաքանչյուր պետական կառավարման մարմին տրամադրեց մեկական ներկայացուցիչ, որոնց կարգավիճակը, գործունեությունն ու իրավասությունները չկանոնակարգվեցին, ինչի արդյունքում ամենօրյա գործունեության ժամանակ և տարաբնույթ արտակարգ իրավիճակներում փոխհամագործակցության ու կենտրոնացված կառավարման ապահովման գործընթացները բավարար մակարդակ չունեն: Այս որոշմամբ հստա-

կեցվում են ներկայացուցչի կարգավիճակն ու իրավասությունները, կանոնակարգվում է ամենօրյա գործունեության ժամանակ և արտակարգ իրավիճակներում տեղեկատվության փոխանակման գործընթացը, ապահովվում ներդաշնակ գործողությունների անհրաժեշտ մակարդակ և նպատակային կենտրոնացված կառավարում, բարձրացվում է պետական կառավարման մարմինների ներգրավվածության և իրազեկվածության աստիճանն արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում:

Որոշմամբ հստակ սահմանված է, թե ինչ ասել է տեղական, համայնքային, մարզային, հանրապետական, անդրսահմանային նշանակության արտակարգ իրավիճակ, արտակարգ դեպքի, պատահարի բարդության որ աստիճանի դեպքում իրավիճակի գնահատման և հետևանքների վերացման համար որքան ուժեղ են ներգրավվում և այլն:

Մանրամասներ երկկողմ հանդիպումներից

Մեր թերթի 32-րդ համարում տեղեկացրել ենք, որ 2017-ի սեպտեմբերի 2-4-ը Երևանում անցկացված Arm Security անվտանգության բարձր տեխնոլոգիաների միջազգային ցուցահանդեսի շրջանակներում ՀՀ ԱԽ նախարար Դավիթ Տոնոյանը երկկողմ հանդիպումներ է ունեցել տարբեր երկրների և մասնավոր ընկերությունների ներկայացուցիչների հետ: ՀՀ ԱԽ արտաքին կապերի վարչության պետ Մարիամ Չևրոյանը որոշ մանրամասներ ներկայացրեց այդ հանդիպումներից:



ՀՀ ԱԽ նախարարը գոհունակություն է հայտնել խոսրովի անտառի հրդեհի մարման աշխատանքներում ՌԴ ԱԽ ցուցաբերած օգնության, հաշված ժամերում ինքնաթիռ ուղարկելու համար և առաջարկել քննարկել Հայաստանի տարածքում փրկարարական մեկ հերթապահ ուղղաթիռ ունենալու հարցը: Ռուսաստանի ներկայացուցիչներն ասել են, որ ներկայումս իրականացնում են ավիացիայի թարմացման, կարերի վերապատրաստման ակտիվ աշխատանքներ ու Հայաստանի ԱԽ նախարարի առաջարկը կփոխանցեն Ռուսաստանի ԱԽ նախարարին:

Գերմանական THE TECHNISCHE HILFSWERK ընկերության արտաքին կապերի պատասխանատու Թոմաս Յոնիքի հետ Դավիթ Տոնոյանը խոսել է «խոսրովի արգելոցի» հրդեհից, պատմել հրդեհի մարման աշխատանքների կազմակերպման մասին և խնդրել դիտարկել փորձագետներ իրավիճակի և գնահատման առաքելություն իրականացնելու հնարավորությունը: Թոմաս Յոնիքը խնդրել է դիմել Եվրամիության համապատասխան օղակներին խոստանալով աջակցել փորձագետական խումբ ստեղծելու և գնահատման առաքելություն Հայաստան ուղարկելու հարցում:

Խոսրովի անտառի հրդեհի մասին Դավիթ Տոնոյանը խոսել է նաև Ռուսաստանի Դաշնության արտակարգ իրավիճակների նախարարության պատվիրակության հետ:

Հանդիպում «Նահիրիտի» հարցով

Սեպտեմբերի 19-ին ՀՀ ԱԽ նախարար Դավիթ Տոնոյանն ու «Նահիրիտ» գործարանում առկա քիմիական նյութերի վերաբերյալ ուսումնասիրություններ իրականացնող փորձագիտական խմբի անդամները աշխատանքային հանդիպում են ունեցել:

Փորձագետները տեղեկացրել են, որ արդեն ծանոթացել են գործարանի արտադրական տեխնոլոգիաներին, գրուցել մասնագետների հետ, ուսումնասիրել առկա տարբեր քիմիական նյութերի ծավալը, վիճակը, դրանց պահպանության պայմանները, տարաներն ու պահեստարանները, ռիսկերն ու հնարավոր ազդեցությունը մարդկանց և շրջակա միջավայրի վրա: Աշխատանքները շարունակվում են, փորձագիտական խումբն առաջիկայում կներկայացնի խնդրի լուծման առաջարկների փաթեթ:

Տեղեկանք

Օգոստոսի 28-30-ը «Նահիրիտ» գործարանում այրվեց եփնուլ քիմիական օրգանական նյութը: ԱԽ նախարարությունը գործարանից եկող քիմիական և էկոլոգիական ռիսկերի, բնակչության և շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցության գնահատման հարցերի լուծմանն աջակցելու խնդրանքով դիմել էր միջազգային կազմակերպություններին: ՄԱԿ-ի մարդասիրական գործերը համակարգող գրասենյակի (UN OCHA) միջոցով Հայաստանին խնդրանքին արձագանքել էր Արտակարգ արձագանքման համակարգող եվրոպական կենտրոնը (ERCC) Եվրոպական համաձայնագրով քաղաքացիական պաշտպանության և մարդասիրական օգնության ծրագրերի ECHO, ցանցի օղակ): Սեպտեմբերի 11-ին Հայաստան են ժամանել ֆրանսիացի, շվեդ, շվեյցարացի երեք փորձագետ:

ԳՆԱՀԱՏՎՈՒՄ Է ՔԱՂՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ

Սահմանաճեղձ Տավուշում ծրագիրը գրավել է լրատվամիջոցներին

2014-ի մարտի 27-ին ՀՀ կառավարությունը հաստատել է «ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատման» կարգը, իսկ սեպտեմբերի 25-ին՝ նշված գնահատման ժամանակացույցն ու կազմակերպությունների ցանկը:



2015-2019 հատվածի համար քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատում է արվելու մարզային և համայնքային 35 կազմակերպություններում: Մինչ օրս գնահատվել է 20 կազմակերպություն՝ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և ենթակա կազմակերպություններ, կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե, բնապահպանության, առողջապահության, գյուղատնտեսության, արդարադատության, մշակույթի նախարարություններ և ենթակա կազմակերպություններ և այլն: Հայաստանի 10 մարզից 9-ը՝ բոլոր համայնքներով, արդեն գնահատվել է՝ Վայոց ձոր, Գեղարքունիք, Արարատ, Արմավիր, Սյունիք, Կոտայք, Լոռի, Արագածոտն, Տավուշ: Այս տարվա նոյեմբերին քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատում կարվի Շիրակում ներառելով բոլոր համայնքները:

Քաղաքացիական պաշտպանության վիճակի գնահատման աշխատանքներն այնպես են կազմակերպված, որ ուշադրությունից դուրս չի մնում ոչ մի կազմակերպություն: Օրինակ, Արմավիրի մարզի համալիր գնահատման մեջ ներառվել է Մեծամորի ատոմակայանը: Քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատման աշխատանքային խմբի անդամ, ՀՀ ԱԽ


փրկարար ծառայության քաղաքացիական պաշտպանության վարչության քաղաքացիական պաշտպանության հարցերով կառավարման մարմինների կազմակերպությունների գործունեությունը համակարգող բաժնի պետ Արթուր Խաչիկյանի խոսքով՝ 2018, 2019 թվականներին քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատում է արվելու անցած տարիներին գնահատում չանցած նախարարություններում և գերատեսչություններում՝ պաշտպանության նախարարություն և ստորաբաժանումներ, կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, տարածքային կառավարման և զարգացման նախարարություն և ստորաբաժանումներ, Կենտրոնական բանկ, Ազգային վիճակագրական ծառայություն և այլն: Գնահատումը սովորաբար տևում է 4 օր, հինգերորդ օրն անցկացվում է շտաբային ուսումնասիրություններում ստուգելու համար տեղի քաղաքացիական պաշտպանության անվտանգության պատրաստվածության աստիճանը: Վերջում քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատման աշխատանքային խումբը ակտ է կազմում, որում, բացի վիճակը ներկայացնելուց, նաև առկա թերությունները և բացերը վերացնելու՝ քաղաքացիական պաշտպանության համակարգը բարելավելու հստակ առաջարկներ են լինում. արդիականացնել ազդարարման

համակարգը, ձեռք բերել այս կամ այն գույքը և այլն: Ակտը հաստատում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարը, իսկ գնահատված կազմակերպությունը ակտի հիման վրա կազմում է թերությունների վերացման ժամանակացույց: Չի բացառվում, որ քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատման աշխատանքային խումբը ևս մեկ անգամ անցնի արդեն գնահատված գերատեսչություններով ու կազմակերպություններով՝ տեսնելու համար թե ով ուր է հասել թերությունների վերացման հարցում: 2015-2017 հատվածում իրականացված գնահատումներից Արթուր Խաչիկյանն առանձնացնում է սահմանաճեղձ Տավուշում կատարված աշխատանքը: Հայ-ադրբեջանական 930 կմ երկարությամբ սահմանի 352 կմ-ը Տավուշի «բաժին» է, մարզում քիչ չեն սահմանի «կյած» բնակավայրերը: Տավուշի մարզային լրատվամիջոցները, այդ թվում՝ հեռուստաընկերությունը, լայնորեն լուսաբանել են թե քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատումը, թե ավարտական շտաբային վարժանքը, հարցազրույցներ ունեցել պատասխանատուների հետ:

Եղը Արամ ԶԱՔՐԱՅԱՆ

Մեծը և քրդերը

Թուրքիայի մեջ քաղաքական իմաստով ամենաառաջադեմ շրջանակը քրդերն են, բայց ամենահետադեմը նույնպես քրդերն են: Սեպտեմբերի 26-ին Իրաքի քրդերը անկախության հանրաքվե են անցկացնելու: Ոգևորությունը քրդական աշխարհում մեծ է, բայց և իրենք էլ հստակ չգիտեն, թե ի՞նչ է լինելու հետո: Մեծ տերությունները հորդորել են ձեռնպահ մնալ այդ մտադրությունից: Բաղդադը սպառնում է արյան մեջ խեղդել քրդերին: Սույն հոդվածը պատմական Հայաստանում ապրող հայերի և քրդերի հարաբերությունների մասին է...



ԱՐԱՐԱՏԻ ՄՅՈՒՍ ԿՈՂՄՈՒՍ

Սասունը հայաթափվել է 1980-ականներին

Պապի հետքերով
Սոֆյա Հակոբյանը 24 տարեկան է, որից 11-ն է Հայաստանում ապրել: Ծննդավայրը Կիևն է, արմատները Էրզրոց են՝ Սասունից: Սովորել է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության բաժնում, ավելի ուշ Ստամբուլում ուսումնասիրել է օսմաներեն: Նա թուրքագետ է, սակայն իրեն առաջին հերթին համարում է լրագրող: Համագործակցում է Հայաստանի և սփյուռքի մամուլի հետ: «Երբ ինձ հարցնում են՝ ինչպե՞ս գտար սասունցիներին, պատասխանում եմ ես չգտա սասունցիներին, սասունցիներն ինձ գտան: Պապ Սասունից էր: Վեց տարի առաջ գնացի Սասուն պապիս հետքերով, գտնելու մարդկանց, որոնք որևէ կապ կունենային նախնիներս հետ»,- ասում է Սոֆյան: Իսկ պապին չի տեսել, մահացել է իր ծնվելուց առաջ, պոլսահայ տատի պատմածն է դաջվել հոգում: «Կտոր-կտոր պատմություններ կային հիշողության մեջ, և ուզում էի ամբողջացնել դրանք: Բայց երբ հասա Սասուն, տեսա, որ շատ քիչ բաներ կան մեզ հետ կապված: Չգտա այն, ինչ փնտրում էի, ավելի հետաքրքիր բաներ գտա, որոնք էլ հենց սկիզբ դրեցին իմ հետագա ուսումնասիրություններին»:



Մեծն է այդտեղ բերել-բնակեցրել: Իսկ թուրքերը գրեթե կապ չունեն այդ տարածքի, մշակույթի հետ»,- իր դիտարկումներն է ներկայացնում Սոֆյա Հակոբյանը:

Պապի գյուղում մուսուլմանացած են բոլոր հայերը, բայց կան տասնյակ այլ գյուղեր, մեծամասամբ՝ Մարաթուկի փեշերին, որտեղ կողք կողքի ապրում են և՛ մուսուլման, և՛ քրիստոնյա հայեր, որոնք արաբներն են խոսում, մակ հայերեն՝ պահպանելով բարբառը, իհարկե, դրանք մեծահասակներն են. «Սակայն ամբողջ Սասունի տարածքում 4 հայ ընտանիք են, որոնց անձնագրերում մշված է քրիստոնյա: Քրիստոնյա հայերը Սասունից հիմնականում Ստամբուլ են տեղափոխվել և բավականին մեծ թիվ են կազմում՝ 15 հազարից ավելի: Նրանք եկել են վերջինը, բայց հայ համայնքում, հատկապես Պոլսում, ամենաշատն են»: Հայերը Սասունից Ստամբուլ են տեղափոխվել 1980-ականների վերջերին: Իսկ մինչ այդ Սասունի լեռներում մի քանի հազար քրիստոնյա հայեր են ապրել: Հեռացել են կրոնական ճնշումներից, սոցիալական խնդիրներից դրված: «Ստամբուլում կա հայկական վարժարան, եկեղեցի և հայկական համայնք: Երեխան կարող է հայալեզու կրթություն ստանալ և մկրտվել եկեղեցում»:

կախմբեր են կազմել և կռվում են Քրդական բանվորական կուսակցության ՔԲԿ-ի զինյալների դեմ: Միայն երեք գյուղ է, որ հարում է այդ շարժմանը. «Քրդերն ու արաբները փախցնում էին հայ աղջիկներին, սպանում հայ հողատերերին՝ տիրելով նրանց ունեցվածքին: Իհարկե, հայերն այդ ժամանակ պայքարում էին, գեներով պաշտպանում իրենց տունն ու հողերը: Բայց, ի վերջո, կրոնական ու սոցիալական ճնշումները բերեցին Սասունի հայաթափման: Դեռ կան հայեր, որոնք Ստամբուլից ամռանը գալիս են Սասուն, հող մշակում, ամասուն պահում»:

Սասունում վերջին անգամ հայ է սպանվել ութ տարի առաջ. հիմա չեն սպանվում, որովհետև այլևս մեծամասնություն չեն. «Հիմա քրդերն ասում են՝ հայերը մեր գլխի թագ են, մեր եղբայրներն են, որովհետև չորս քրիստոնյա ընտանիք է ապրում, իսկ եթե 40-ը լինեք, պատկերը նույնը կլինեք՝ ինչպես տասնամյակներ առաջ: Եթե մի քիչ շատանան, ինչպես մի տարեց սասունցի սասց՝ կառաները կցուցցնեն: Երբ Դիարբեքի Սուրբ Կիրակոսը բացվեց, օրինակ՝ Ջատիկին եկեղեցի գնում էր 400 հայ, եթե հաջորդ տարի գնան 4 հազար, նորից ակռաները կցուցցնեն՝ քրդերն էլ, պետությունն էլ»: Արաբների մեջ ապրող հայերը համեմատաբար ազատ են իրենց կեցության մեջ. պահպանել են լեզուն: Քրդերի մեջ ապրող հայերը ենթարկվում են բռնաճնշումների: Արաբներն էլ միանշանակ չեն վերաբերվում հայերին. կան ցեղեր, որոնք պաշտպանում են հայերին, ցեղեր էլ կան, որ թշնամաբար են տրամադրված:

Երևանում բարեկամներ ունենք
1970-80-ականների ուրբանիզացիայի տարիներին Արևմտյան Հայաստանից ամենաուշը Սասունն է



հայաթափվել, ամենավեջինն իրենց գյուղերը լքել են սասունցիները: «Այն, ինչ ասում ենք Սասունի իսլամացած և քրիստոնյա հայերի մասին, կարող է չվերաբերել մյուս գավառներին: Սասունը աշխարհագրորեն առանձնացող դիրք ունի, լեզուն, կրոնը պահպանել են մինչև նախորդ դարի 80-90-ականների վերջը: Այդ և մյուս առումներով սասունցիները տարբերվում են Արևմտյան Հայաստանի մյուս հայերից»,- համոզված է Սոֆյա Հակոբյանը՝ նկատի ունենալով տարիների սեփական դիտարկումներն ու ուսումնասիրությունը:

Երբեք խառն ամուսնությունների չեն գնում, սասունցի հայերի ամուսնանում են միայն հայերի հետ՝ լինի քրիստոնյա, թե մուսուլման, պարտադիր չէ՝ սասունցի լինեն, կարևորը հայ լինեն. «Այսպիսի ամուսնությունները շատ մեծ դեր են խաղում սասունցիների կենսակերպում և այդ երևույթը շատ քրիստոնյա է պահպանվում»: Երբ սասունցիները մատուցում են սեղանի շուրջը, իրար ճանաչում են ու բարեկամ են, բոլորն իրար աղջիկ են տվել ու առել: Ստամբուլում և Պոլսում ամենամեծ հարսանիքներն ու հավաքույթները հենց սասունցի հայերն են անում. «Ոմանք քրիստոնյա չեն, հայերն չգիտեն, բայց պահպանում են հայկականությունը»:

Նրանց մի մասի համար էլ իսլամադավանությունը ձևական է՝ բռնաճնշումներից զերծ մնալու նպատակով, իսկ ընտանիքի ներսում պահպանում են ավանդույթները. «Պարտադիր չէ հայկականությունը կապել խաչի հետ: Կարող են մշել Վարդավառը, թխել հայկական գաթա, Մարաթուկի Սուրբ Աստվածածնի ուխտը: Այդ և շատ երևույթներով է դրսևորվում հայկականությունը, ենթագիտակցության մեջ դեռ կա, պահպան-

վում է հայկականը: Երբ հետները գրուցում ես, ակնհայտ է դառնում ամեն ինչ: Նամագի խաչին փռել է, օրը 5 անգամ նամագ է անում, բայց ասում է՝ Երևանում բարեկամներ ունենք, կարող ենք գտնել նրանց»: Իսկ երիտասարդները՝ չլինելով քրիստոնյա, չիմանալով մայրենի լեզուն, ունեն ազգային ինքնագիտակցում, փորձում են կառչել մշակույթից՝ իրենց հայ զգալու համար սովորել հայկական բառեր, և նրանց ոգևորում է Հայաստանի հետ կապված ամեն բան. «Շատ են մտածում Հայաստան գնալ-գալու մասին. եթե կրոնով հայ չեն, գոնե այդպես մնան հայ»:

Սասունցիները Թուրքիայում
Ցիրուցան են, տեղահանված պատմական Սասունի տարածքից, որը բաժանված է Բիթլիսի, Մուշի, Բաթմանի, Սղերդի և Դիարբեքի նահանգների միջև. «Ապրող հայերը մոտ 50 հազար կլինեն, իսկ Թուրքիայում սասունցիների միջին թիվը մոտ 100 հազար է»: Օրինակ՝ Մուշում 15 հազար սասունցի է ապրում, որոնք մուսուլման են և բավականին մոլեռանդ: Մուշում մշեցի հայեր չկան, սասունցի հայերն են, որոնք լեռներից իջել են 1930-ականներին: Տիգրանակերտում քիչ ավելի շատ են քրդացած սասունցի հայերը. «Որքան էլ ասեն, որ հայ են, միևնույն է՝ հոգով-սրտով կապված են քրդականության հետ և ավելի շուտ իրենց կզոհեն այդ շարժման համար, հետո նոր հայկականություն»: Դիարբեքիում ավելի խոր արմատներ ունի քրդականությունը: Այնտեղ ավելի շատ է շփումը, բնականաբար, ուժացման վտանգն ավելի է մեծ, իսկ Սասունի լեռներում փակված են, մեկուսացած, գրեթե կտրված աշխարհից: ■

Քրիստոնյա հայ ընտանիք
Սասունում թուրքեր չկան, թուրքերը Սասունի ճանապարհը չգիտեն, բացի զինվորականներից ու ոստիկաններից: Սասունում ապրում են քրդեր, արաբներ, հայեր: Թուրքերենով այստեղ ոչ ոք չի խոսում. հայը Պոլիս գալուց հետո է ծանոթանում այդ լեզվին: «Արևմտյան Հայաստանը, որը թուրքերը կոչում են Արևելյան Անատոլիա, թուրքերի համար վայրի, անծանոթ տարածք է: Թուրքերը պատկերացում չունեն այդ տարածքների մասին: Քրդերն են, որ ապրում են այնտեղ, որպես հայրենիք են ընկալում՝ Քուրդիստան, հայերին էլ եկվորներ համարում, որոնց իբր Տիգրան



Չրդեհից տուժած փրկարարը

Ջաջուռի հրդեհը քամին ավելի արագ էր տարածում, քան հնարավոր էր կանխել: Պտտահողմը կրակը գալարում էր, որի հետևանքով էլ Ախուրյանի ջոկատից փ/ծ ավագ, օդակի հրամանատար Գրիգոր Ոսկանյանը հրե օդակի մեջ է հայտնվում և այրվածքներով տեղափոխվում հիվանդանոց:

ՉՐԴԵՀԻ ԴԵՄ՝ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՈՒԺԵՐՈՎ

Ջաջուռի հրդեհը

Վերջին շրջանի հրդեհները չորացնեցին նաև Շիրակի մարզը, որը, թվում էր, թե իր բնակչիմայական պայմաններով ամենապահույն է շոգ ու արևոտ: Սեպտեմբերի 7-ին Շիրակի փրկարարական վարչությունում ստացված կանչը, որ Ջաջուռում սարի գագաթին խոտածածկ տարածք է բռնկվել, ամփոփապես փոխանցվեց Ախուրյանի փրկարարներին: Մեկ մարտական հաշվարկ մեկնեց հրդեհի վայր՝ հրամանատարի տեղակալ, փ/ծ մայոր Գրիգոր Արթուրյանի գլխավորությամբ: Այդ մասին է տեղեկացնում է Շիրակի փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Արթուր Կարապետյանը և շարունակում. «Դեպքի վայր հասնելու պես հետախուզում է իրականացվել: Սարի գագաթին՝ մոտ 2000 մ բարձրության վրա, այրվում էր մոտ 12 հա խոտածածկ տարածք»: Գրիգորի ծավալները մեծ էին: Օգնության մեկնեց ևս մեկ մարտական հաշվարկ՝ Գյումրու հրշեջ-փրկարարական ջոկատից: Դեպքի վայր մեկնեց նաև 8 հոգուց բաղկացած մարզային փրկարարական վարչություն օպերատիվ խումբը՝ Արթուր Կարապետյանի գլխավորությամբ. «Քանու հետևանքով հրդեհն արագ էր տարածվում: Գյումրու սիսարևելյան կողմից Ջաջուռի անտառներին էր կրակը սպառնում, իսկ արևմտյան հատվածում գյուղին: Քանի որ նման բարձրության վրա հնարավոր չէր որևէ մարտական հաշվարկ գործի դնել, մնում էր միայն ապավինել մարդկային ուժին»:

Գրիգորի ջանքերը միացան մարզպետարանի աշխատակիցներ, բնակիչներ, օգնության եկան Գյումրու կայազորի 30 զինծառայող՝ հրամանատարի՝ գնդապետ Սարգիս Տարախչյանի գլխավորությամբ: Շիջմանը ներգրավվեցին Ախուրյանի ոստիկանության 15 աշխատակիցներ: «Կրակը սարի լանջից իջնելով՝ մոտենում էր գյուղին, ընդամենը 500-700 մ էր հեռու, երբ վերջնական մարումն իրականացրեցինք: Ապահովության համար Ջաջուռ գյուղի սարալանջի փողոցում, որտեղ կային տներ ու խոտի դեզեր, հերթապահում էին երկու հրշեջ մեքենա: Մեկ մարտական հաշվարկ էլ տեղակայվել էր սարի հակառակ կողմում՝ հյուսիսարևելյան հատվածում, անտառաշերտը պաշտպանելու համար: Բարեբախտաբար դրանց անհրաժեշտությունը չեղավ»: - Ելում է վարչության պետը: Ընդամենը 4-5 ժամ է հրշեջներից պահանջվել սարի վրա այրվող մոտ 40 հա խոտածածկ տարածքը վերջնականապես մարելու համար, որից հետո սահ-

մանվել է հերթապահություն, հանգվելով, որ հրդեհի վերականգնվում էր այլևս չկա, նոր միայն մեկնել են հրշեջ մաս:

Չրդե օդակի մեջ հայտնված հրշեջը

Ջաջուռի հրդեհը քամին ավելի արագ էր տարածում, քան հնարավոր էր կանխել: Պտտահողմը կրակը գալարում էր, որի հետևանքով էլ Ախուրյանի ջոկատից փ/ծ ավագ, օդակի հրամանատար Գրիգոր Ոսկանյանը հրե օդակի մեջ է հայտնվում և այրվածքներով տեղափոխվում հիվանդանոց: «Առավոտյան հերթափոխը հանձնել, եկել էի տուն, և հանկարծ ժամը 12-ի մոտ տազմապ հնչեց: Ամփոփապես գնացի ԳՊՏ, մեկնեցի Ջաջուռ»: - հիշում է օդակի հրամանատարը: Սարալանջին խոտածածկ տարածքն էր այրվում, կրակը թույլ էր, քամի չկար. «Մարում էի կատարում, երբ պահի տակ հողմապոստի մոտիկի պես քամի բռնեց, բոցը խփեց դեմքիս ու ինձ առավ կրակի մեջ: Ինձ չկորցրեցի, դուրս եկա կրակի օդակից, ասացի՝ տղերք, դիմավորեք, վառվել եմ, և իջա ցած»: Փ/ծ ավագին անմիջապես տեղափոխում են Գյումրու բժշկական կենտրոն՝ տարբեր աստիճանի այրվածքներով դեմքի և ձեռքերի հատվածներում: Գրիգոր Ոսկանյանի տունը հրշեջ մասի հարևանությամբ է. «Բոլոր կանչերը լսում եմ, ամփոփապես գնում հրշեջ մաս, և եթե իմ կարիքը կա, մեկնում դեպքի վայր»: Այդպես է վարվել նաև սեպտեմբերի 7-ի հրդեհի օրը: Փ/ծ ավագն Ախուրյանի ԳՊՏ-ում ծառայում է 2003-ից, պարգևատրվել է «10 տարի անբասիր ծառայություն» մեդալով և օրերս անցնելու է թոշակի. «Դիմումս արդեն գրել եմ և սպասում եմ հրամանին»: Օդակի հրամանատարն ասում է, որ շատ դժվար է, ամբողջ կյանքն անցել է հրշեջ մասում, հիմա չի պատկերացնում իրեն առանց ծառայության, ջոկատից դուրս. «Բայց միևնույն է, երբ կանչ լսեմ, գնալու եմ ջոկատ՝ տղաների մոտ, ինչով կարող եմ օգտակար կլինեմ: Իմ կյանքն է, միշտ մնալու եմ հրշեջ-փրկարար»:

Կարավասարի հրդեհը

Սեպտեմբերի 12-ին Շիրակի փրկարարները նոր ահազանգ ստացան: Կարավասարում խոտածածկ տարածք է այրվում: Աշոցքի ԳՊՏ-ից մեկ մարտական հաշվարկ է մեկնում դեպքի վայր:



Պարզվում է, որ հրդեհվել է սարալանջը՝ 2200-2500 մ բարձրության վրա, և հրդեհին հասնելու համար չկան ճանապարհներ, վերելքն անհնար էր «Ջիլ» մեքենայի համար: Մնում էր կրկին ապավինել մարդկային ուժին: ԳՊՏ հրամանատար, փ/ծ կապիտան Վահագն Դանիելյանի գլխավորությամբ, համայնքի բնակիչների հետ կազմակերպում են հրդեհաշիջման աշխատանքներ: «Այրվում էր 35-40 հա արոտավայր, որը մարվել է 3-4 ժամվա ընթացքում հրշեջ-փրկարարների և համայնքի բնակիչների ջանքերով»: - տեղեկացնում է փ/ծ գնդապետ Արթուր Կարապետյանը: Գրիգորի օրը, կեսօրին մոտ, ահազանգ է ստացվում, որ նույն Կարավասարի մարած հրդեհի հարևանությամբ նկատվում է ծուխ և կրակի տարածմանը պատրաստում է ուժգին քամին: Կրկին Աշոցքի հրշեջ-փրկարարներն են մեկնում հրդեհի վայր և պարզում, որ նախորդ օրվանից ավելի մեծ հրդեհ է բռնկվել, որն էլ ահազանակով մոտենում է մարած տարածքի սահմաններին: «Ամփոփապես մեկնել եմ դեպքի վայր, ինձ հետ էր նաև հրդեհաշիջման գծով վարչության պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ Կարեն Եղջատյանը: Գրիգորը շատ մեծ էր, սարի գագաթից իջնելով՝ մոտենում էր անտառածածկ տարածքին, մի կողմում 3-4 կմ էր հեռու, իսկ մյուսում՝ ընդամենը 2 կմ»: - Նշում է վարչության պետը: Կրկին միանում են հրշեջ ու կամավոր, նաև անտառատնտեսության աշխատակիցները, և լաթերով ու ծառի ճյուղերով, ձեռքով ջուր հասցնելով՝ իրականացնում հրդեհաշիջում. «Իրավիճակը բարդանում էր: Ձեկուցեցի փրկարար ծառայության

տնօրեն Մուշեղ Ղազարյանին, որի կողմից էլ «տազմապ» հայտարարվեց Շիրակի մարզում»: Բոլոր ուժերը համախմբեցինք Կարավասարի շուրջը: Սակայն օրը մթնում էր, իսկ հրդեհը բոցկտում էր մինչև 3000 մ բարձրության վրա՝ ձորակներով ու հեղեղատներով տարածվում, ինչին նպաստում էր քամին: Ստեղծվել էր հոծ ծխապատ գոտի, որն առանձնակի վտանգ էր ներկայացնում մարդկային կյանքին և առողջությանը, անհնար էր շարունակել շիջումը, տեսանելիություն գրեթե չկար: Ստիպված սպասեցինք լուսաբացին: Սակայն անտառի բռնկման վտանգն ունենալով՝ սարի երկու կողմերում սահմանեցինք զիջերային հերթապահություն: «Աշխատանքները վերսկսեցինք առավոտյան 5:30-ի սահմաններում՝ 112 հոգով: Արդեն ժամը 9:15-ին հրդեհը մեկուսացվեց»: Շիջում էին միաժամանակ սարի երկու կողմերում: Կարավասարի կողմում, որտեղ հիմնական հրդեհաշիջումն էր, ղեկավարում էր վարչության պետ Արթուր Կարապետյանը՝ կոորդինացնելով նաև ամբողջ աշխատանքը, իսկ Ախուրյան գյուղի կողմից՝ սարի հակառակ երեսին, պատասխանատուն վարչության պետի տեղակալ Կարեն Եղջատյանն էր: «Ընդհանուր առմամբ այրվել է շուրջ 120 հա խոտածածկ տարածք, հրդեհաշիջման աշխատանքներին մասնակցել են Ախուրյանի ջոկատից 14 հրշեջ-փրկարար, Գյումրու ջոկատը՝ 39 փրկարարով, Ամասիայի ջոկատը՝ 15, Աշոցքից՝ 17 և մարզային փրկարարական վարչությունից 7 սպա: Բացի հրշեջ-փրկարարներից, ներգրավված էին նաև 36

զինվորական Գյումրիի կայազորից՝ հրամանատար Սարգիս Տարախչյանի գլխավորությամբ»: Ժամը 17:55-ին կատարվել է հրդեհի ամբողջական մարում, որից հետո անտառտնտեսության աշխատակիցներն ու համայնքի ղեկավարները՝ բնակիչներով հանդերձ, գիշերային հերթապահություն են իրականացրել:

Գրիգորի հրդեհ

Նույն օրը՝ սեպտեմբերի 14-ին, Կարավասարի հրդեհը դեռ չմարած, ժամը 15-ի սահմաններում ահազանգ է ստացվում, որ Ախուրյանի շրջանի սարային հատվածի խոտածածկ տարածքում հրդեհ է բռնկվել: «Գրիգորը սկսվել էր Արագածոտնի կողմից, որտեղ հրդեհաշիջում էին իրականացնում մարզի փրկարարները, բայց քամին, կրակը տարածելով, հասցրել էր Ախուրյանի շրջան»: Դեպքի վայր են մեկնում Ախուրյանի հրշեջ-փրկարարները՝ մեկ մարտական հաշվարկով: «Այդ հրդեհը նույնպես իր չափերով չէր զիջում նախորդներին: Ընդհանուր առմամբ՝ այրվում էր 150 հա խոտածածկ տարածք, 75-ն Արագածոտնի կողմից, 75-ն էլ՝ Շիրակի»: - ասում է վարչության պետը: Գրիգորի հաշիջման միջոցները նույնն էին, հրդեհ սարի գագաթին, որտեղ միայն մարդկային ուժն է կարող աշխատել առանց տեխնիկայի, և կրկին հրշեջ-փրկարարներ, համայնքի բնակիչներ: Այս անգամ հրշեջները Շիրակի և Արագածոտնի կողմից կրակը մարելով՝ հանդիպել են սարի գագաթին և ձեռք ձեռքի տվել ամբողջացած աշխատանքի համար:

Օգնության են հասել նաև Աճի ջոկատից 10 հրշեջ-փրկարար, սակայն նրանց սար բարձրանալու կարիքը չի զգացվել, քանի որ արդեն ժամը 17-ի սահմաններում հրդեհը մեկուսացված էր, իսկ 30-40 րոպե անց՝ լիովին մարված: «Ընդհանրապես մեկ հայտնում մարզի բոլոր կառույցներին՝ պատրաստակամորեն մեզ աջակցելու համար, հատկապես հրշեջ-փրկարարներին՝ իրենց անձնուրաց աշխատանքի համար և մասնավորապես՝ փ/ծ ավագ Գրիգոր Ոսկանյանին, որն այս պահին այրվածքներով հիվանդանոցում է»: - եզրափակում է Շիրակի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Արթուր Կարապետյանը: ■

Ֆելիքս ԵՂԻԱՋԱՐՅԱՆ

Անտառային հրդեհները՝ ահաբեկչություն

Ֆրանսիայի ազգային ոստիկանության գլխավոր վարչությունը տեղեկացրել է, որ ահաբեկիչները մշակել են թիրախ պետություններին վնասելու նոր ձևեր: Վերջին տարիներին իսլամիստ արմատականների ահաբեկչություններից մեծապես տուժած ու մարդկային բազմաթիվ կորուստներ կրած Ֆրանսիայի ոստիկանների տրամադրության տակ են հայտնվել ահաբեկիչների որջերից գտնված փաստաթղթեր, որտեղ ներկայացված են «անհավատների դեմ պայքարի» նոր ձևեր. գնացքների պայթե-

ցում, մթերքի թունավորում, անտառների հրդեհում: Այս փաստաթղթերին ծանոթանալուց հետո Ֆրանսիայի ոստիկանությունը հատուկ ուշադրության օբյեկտներ է դարձրել բոլոր տեսակի գնացքները, մետրոն վաղուց էր նման ուշադրության կենտրոնում: Երկրի բնակավայրերի ղեկավարներին ոստիկանությունը կոչ է արել լինել առավել զգոն և ուշադիր՝ հատկապես, եթե օտար մեկը պնդում է, որ զբոսաշրջիկ է և խնդրում իրեն ցույց տալ տեղի տեսարժան վայրերը: ■





Արտակարգ ժամանակներ

...Արհմիության կազմակերպած էքսկուրսիան առիթ էր հանդիպելու իմ անցյալի հետ, այս անգամ՝ հանգստի նպատակով: Շնորհիվ բարձր կազմակերպվածության՝ նպատակը հաջողվեց: Անգամ երգը չսպասեց, որ իրեն հրավիրեն, եկավ ու գրավեց բոլորի տրամադրությունը:

Երբ նախարարությունում ստեղծվեց համակարգի աշխատողների արհեստակցական կազմակերպություն՝ առաջին թերահավատը ես էի. մեր ես ժամանակներում ի՞նչ արհմիություն, ո՞րն է լինելու նրա դերը, ի՞նչ աշխատանքներ է իրականացնելու: Եվ չտեսնելով այս հարցերի պատասխանը, նաև այդ պատճառով հրաժարվեցի անդամագրվել: Մասնավորապես՝ Քաղժառանգության մասին օրենքով, և աշխատանքային հարաբերություններն էլ կարգավորվում են նաև այդ օրենքով: Բայց որպես համակարգի աշխատող՝ ականջալուր էի այդ կազմակերպության աշխատանքներին և առանց որևէ պարտադրման՝ որոշեցի անդամագրվել:


Արցախ աշխարհ

Իմ սերնդակիցների ապրած ժամանակաշրջանը բաժանվեց երկու մասի. Շարժումից առաջ և Շարժումից հետո: Շարժումից առաջ իմ այցը Արցախ ճանաչողական էր, նաև գրուցել ՊՂ-Պուրու համագյուղացիների հետ, անցնել «Դավիթ Բեկ» ֆիլմի նկարահանումների վայրերով, գրուցել ու ճանաչել արցախցիների, որոնք այն ժամանակ մի երազանք ունեին, որ իրենց մայրաքաղաքը լինի ոչ թե Բաքուն, այլ Երևանը: 1988-ին մասնակցում էի Ստեփանակերտում անցկացվող միտինգներին, հնարավորություն ունեցա գրուցել Մոսկվայից հատուկ ուղարկված մարդկանց հետ: Ամռանառաջ է հանդիպումը բացառիկ հատկանիշներով օժտված մարդու, մարզկենտրոնի ղեկավար Յենիկ Անդրեյի Պողոսյանի հետ, ում հետ առաջին հարցազրույցը վարելու պատիվը ունեցա: Նա առաջինն էր, որ Գորբաչովին ներկայացրեց խնդիրը բացառիկ գրագիտությամբ: Ժամանակի մասնունում այդ մասին ընդարձակ անդրադարձներ եղան:

...Արհմիության կազմակերպած էքսկուրսիան առիթ էր հանդիպելու իմ անցյալի հետ, այս անգամ՝ հանգստի նպատակով: Շնորհիվ բարձր կազմակերպվածության՝ նպատակը հաջողվեց: Կազմակերպության ազատված նախագահ, գյումրեցու հարս Լյուդմիլա Մելիքյանի «էսքան կնիք, որ մեկտեղ հավաքվեն, ինչը կեղծի» «հույսերը» չարդարացան: Անգամ երգը չսպասեց, որ իրեն հրավիրեն, եկավ ու գրավեց բոլորի տրամադրությունը: Ու հենց երգելով էլ հասանք անցակետ: Այստեղ էլ պահանջված կարգը ետ-ետ ընկրկեց, երբ ավտոբուսի վարորդն ընդամենը ընթացքը դանդաղեցնելով պատուհանից արտաբերեց «9-1-1», անցակետի աշխատակիցը պատվի առավ և բարի ճանապարհ մաղթեց: Արցախ աշխարհի հետ մեր առաջին հանդիպումը Թարթառ գետի ծախս ափին Մռավ սարի անտառապատ լանջին հանգրվանած, սուրբ Դադեի գերեզմանատեղում կառուցված Դադիվանքն էր՝ Արցախի հնագույն համալիրներից մեկը, որն ըստ ավանդության, կառուցվել է դեռևս 1-ին դարում:

Գյուրանցում տեղավորվելուց հետո մեզ սպասում էր շրջագայությունը՝ արդեն Նոր բովանդակություն հազած Ստեփանակերտով:

ԱՐՏԱԿԱՐԳ ՕՐԵՐ ՈՒ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԱՐՑԱԽ-ԵՐԵՎԱՆ ՃԱՆԱԿԱՐԳՅԻՆ




Այդ նոր բովանդակությանը իրենց մասնակցությունը բերած մեծահարուստներին մտովի ներեցինք աղքատ երկրում հարուստ լինելու համար և հարգելով նրանց նպատակային ներդրումները, հիացանք «Վալենթ» հյուրանոցային շքեղ համալիրով, Անդրկովկասում մնալու չունեցող մեծ ու գեղեցիկ, բոլոր անհրաժեշտ սարքավորումներով հագեցած ու խիստ ժամանակակից հիվանդանոցով: Շրջեցինք նաև գիշերային մթության մեջ լույսերով ողողված Ստեփանակերտով ու մտովի էքսկուրսը խորացրինք ոչ միայն պատերազմ ապրած քաղաքի, այլև մ. ք. ա. 5-րդ դարի հույն պատմաբան Քսենոֆոնի «Անաբազիս» գրքում նկարագրված գետնափոր տների, ապա ռուսական բանակի հիմնածրագրակի պոստի, Մելիք Շահնազարյաններից Շոշվա Մեհտի Դուլի Խանի կապով վերցրած զորանոցի տարածքը Խանքենդի կղզեկու ժամանակներ ու հասանք Դարբաղի նորաստեղծ կառավարության Շուշից այդ քաղաքը տեղափոխվելուց հետո Ստեփանակերտ անվանափոխելու ժամանակներ:

Երկրորդ օրը ավելի հագեցած էր ու ավելի գունեղ: Բոլորիս հիշողություններում դեռ թարմ են հուշալուրի դեպքերի իրարաներժ տեղեկատվությունները, որոնք արդեն թողված էին գյուղի ավերակների մեջ: Անցանք Ասկերանի շրջանի միակ քաղաքի՝ շրջկենտրոն Ասկերանի միջով, որտեղ տեսանելի էր Ասկերանի բերդի նշանակությունը: Հաջորդը Տիգրանակերտի բերդն էր, որը հնարավորինս բոլոր կողմերով «յուրացրինք» մեր հեռախոսներով ու մեզ տեղադրեցինք բերդի մեր նախընտրած բոլոր տարածքներում: Ամենից տպավորիչը Վանք գյուղում անցկացրած ժամանակն էր: Իմ այցի նպատակը ինձ հարագատ «Հայաստանի գրուցակից» շաբաթաթերթի սեփականատեր, այլևս իր անվանը անբաժան բարերար, «Հայաստան» հայկական հիմնադրամի խոշորագույն ներդրողներից մեկի՝ Լևոն Գուրգենի Հայրապետյանի գյուղը տեսնելն էր: Նրա ֆինանսավորմամբ սեղծված, կառուցված, նորոգված կառույցների թվարկումն անգամ շատ ծավալուն է, բայց չեն կարող չնշել նրա տեսակը, մարդ, ով

ամոթ էր համարում աղքատների մեջ հարուստ լինելը գործնականում և բարեգործություն անում էր ոչ իր անձի շեշտադրման համար: Բոլոր պաշտոնյաները կախվածություն ունեն: Լևոնը սիրել է անկախությունը և երբեք պաշտոնի չի ձգտել: Նրա հարագատ տատը Նժդեհի մեծ բույրն է, հայրը անվանի քիմիկոս է: «Պերեստոյկայի» տարիներին Լևոն Հայրապետյանը, ում «Կոմսոմոլսկայա պրավդա»-ն հրավիրել էր աշխատանքի, Ուզբեկստանի կոմկուսի կաշառակերության մասին հողված տպագրեց: Գորբաչովը հրահանգեց բոլորին հանել, Լևոն Հայրապետյանը փոխադրվեց «Սոբեսեդնիկ», որը հետագայում դարձավ նրա սեփականությունը: Վանք գյուղում կառուցած նրա գեղեցիկ համալիրում էլ անցկացրինք մեր հանգիստը, որի ընթացքում ի հայտ եկան շատերի գեղեցիկ նախասիրությունները: Հայրենասիրական ոգին բոլորին էր համակել, պարզվեց, որ ԱՆ-ականները նաև արտակարգ երգել, պարել ու կատակել գիտեն: Գանձասարի վանքում եղան երգերի կատարումներ, որոնց հոգեցունց ընտրությունը արդեն իսկ խոսում էր: Գանձասարի բարձունքից կրկին հիացանք ասես ափի մեջ գտնվող Վանք գյուղով ու վերադարձանք Ստեփանակերտ: Ճանապարհին չէինք կարող չհանդիպել Արցախի տատիկ-պապիկին ու նրանց ներկա չդարձնել մեր լուսանկարներում:

...Այցը Շուշի մեր վերադարձի օրն էր: Երեք կողմերից բնական կիրճերով շրջապատված Շուշի մուտքը Վազգեն Սարգսյանի անվան հրապարակից է սկսվում սպարապետի հուշաբանդակով: Շուշիի բարձունքից տեսանելի էր այն ճշմարտությունը, որ ով տիրում է Շուշիին տիրում է Արցախին: Անհրաժեշտ երազանք էր թվում Շուշին դարձյալ հայացած տեսնելը, բայց մենք այդ փաստն ընկալեցինք շատ սովորական: Փոխարենը, երիտասարդ գիղը, չգիտես ինչու, կարևորել էր Ջոզդուզ կոչվող կիրճը, որի ոչ անունն էր հարագատ, ոչ էլ մոտենալն էր անվտանգ: Մեր էքսկուրսիան ավարտին հասավ Շուշիի Ղազանչեցոց եկեղեցում, որի սպիտակ կրաքարով կառուցված լինելը յուրահատուկ տեսք է տվել կառույցին: Այն



Շուշիի մայր տաճարն է և համարվում է Առաքելական եկեղեցու Արցախի թեմի կենտրոնը: Արցախի հայտնի ուսեստը ժենգալով հացը, վայելեցինք Գորիսը վերևից տեսնելու հաճույքին շաղախած, ոտքի վրա. ուտելու տեղը ընտրել էր ամբողջ ուղևորության ընթացքում խոսելու նյութ ունեցող մեր վարորդը:

Վերադարձը Լաչինի ճանապարհով էր: Վայքում շատերս դուրս եկանք հյուրի կարգավիճակից ու տնեցու իրավունքով ըմբռնեցինք մայրուղուն կապ ղեղձնու ջրալի պտուղները: Նման մի դեպք էլ հիշողությանս մեջ մնացել է ուսանողական արշավից, երբ արդարացում էր այն, որ տնկողը հենց անցորդի համար է մայրուղուն այդքան մոտ տնկել ու դիտմամբ չի չափարել. տատս ասում էր՝ թե՛նու ճյուղերը չափարվել չեն սիրում: Այդպես մտածելը և Վայքն էր հա-

րագատ դարձնում, և վայքեցուն բարի որակում տալիս: Ինչևէ, գնողները գնեցին, չգնողները համտեսեցին, իսկ խիստ «օրինապահները» փնթփնթոցը արտաբերման կես ճանապարհին հուճկապատեցին ու օրվա հոգսությանը հանձնեցին:

Օրն ավարտվեց արդեն գիշերային երևանում, բայց շատերի համար բաժանունն ակնկալիքով էր, որ առջևում դեռ շատ բովանդակալից հանդիպումներ են սպասվում:

Հ.Գ. Կոլեկտիվ անպաշտոն շրջագայությունները մի լավ կողմ ունեն. հեշտ է մարդկանց ճանաչելը. մի փոքրիկ շտրիխը կարող է բնութագրական լինել, ասենք՝ գիջելու ունակությունը, կոպիտ խոսքին մեղմ պատասխանը...



«Ամենահաս Դավիթը»

Աշխարհում խոսող տիկնիկներ շատ կան: Դավիթը խոսում է արդեն ճանաչելու և արդեն ճիշդ մակագեցնելու մասին: Առայժմ մեկ տիկնիկ կա, որը խոսում է էլեկտրական հոսանքի օգտագործման կանոններին հետևելու կարևորության մասին, որ հրդեհ չլինի: Կարող է խոսել արդեն ճիշդ կառավարման ցանկացած այլ ուղղության մասին:

ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՁԵՎԱԿՈՐՈՒՄ

«Սուդեր Դավիթ» առցանց նոր խաղը հասանելի կլինի երկու շաբաթից

«Ամենահաս Դավիթը» արդեն ճիշդ մակագեցման կրթության ծրագրերում առաջին անգամ երևացել է 2011-ին, երբ Եվրամիության և ՄԱԿ-ի մասնակցության հիմնադրամի աջակցությամբ հրատարակվեց ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի մասնագետների մշակած «Գիտեմ, պատրաստ եմ, կարող եմ» արդեն ճիշդ մակագեցման կրթության ծրագրերը տարրական դպրոցի աշակերտների համար: Այստեղ «Ամենահաս Դավիթը» երեխաների հետ խոսում էր ուսանավորներով (հեղինակ՝ Դանիել Մաթևոսյան): Օրինակ՝ սենյակի անվտանգ կահավորման մասին:

տական ակադեմիայի և Dasaran.am կայքի միջև սկսված անվտանգության մշակույթի ձևավորմանն ուղղված համագործակցության արդյունքում «Սուդեր Դավիթը» առցանց խաղի հերոսի տեսքով է ներկայանում տարրական դպրոցի աշակերտներին: Անվտանգության մշակույթի ձևավորման կրթությունը պետք է սկսվի ամենացածր տարիքից ու դրա համար էլ «Սուդեր Դավիթը» տարրական դպրոցի աշակերտների համար նախատեսված խաղի հերոս է: Dasaran.am-ն ավելի քան 987 հազար օգտատեր ունեցող կրթական միջավայր է, որտեղ նորարարական ուսուցումը լայն հորիզոններ է բացում երեխաների համար: Կայքի կարգախոսն է՝ «Կրթությունը պետք է լինի հաճույք, այլ ոչ թե պարտադրանք»:



Մի մեխ չունե՛ս,
Պահարանդ պատի՛ն խիստ:
Ի՞նչ կլինի,
Պահարանդ դու դռներից
Դեռու դենս:

Այս սեպտեմբերի 2-4-ը երևանում անցկացված Arm-Security անվտանգության բարձր տեխնոլոգիաների առաջին միջազգային ցուցահանդեսում «Ամենահաս Դավիթը» ներկայացավ խոսող տիկնիկի տեսքով: Աշխարհում խոսող տիկնիկներ շատ կան: Դավիթը խոսում է արդեն ճիշդ մակագեցնելու և արդեն ճիշդ մակագեցնելու մասին: Առայժմ մեկ տիկնիկ կա, որը խոսում է էլեկտրական հոսանքի օգտագործման կանոններին հետևելու կարևորության մասին, որ հրդեհ չլինի: Կարող է խոսել արդեն ճիշդ մակագեցման կանոններին հետևելու կարևորության մասին, որ հրդեհ չլինի: Կարող է խոսել արդեն ճիշդ կառավարման ցանկացած այլ ուղղության մասին: Այս տարվա փետրվարին 33 ԱԻՆ ճգնաժամային կառավարման պե-

տական ակադեմիայի և Dasaran.am կայքի միջև սկսված անվտանգության մշակույթի ձևավորմանն ուղղված համագործակցության արդյունքում «Սուդեր Դավիթը» առցանց խաղի հերոսի տեսքով է ներկայանում տարրական դպրոցի աշակերտներին: Անվտանգության մշակույթի ձևավորման կրթությունը պետք է սկսվի ամենացածր տարիքից ու դրա համար էլ «Սուդեր Դավիթը» տարրական դպրոցի աշակերտների համար նախատեսված խաղի հերոս է: Dasaran.am-ն ավելի քան 987 հազար օգտատեր ունեցող կրթական միջավայր է, որտեղ նորարարական ուսուցումը լայն հորիզոններ է բացում երեխաների համար: Կայքի կարգախոսն է՝ «Կրթությունը պետք է լինի հաճույք, այլ ոչ թե պարտադրանք»:

«Սուդեր Դավիթը» պետք է անցնի ուժ աշխարհի՝ երկրաշարժ, կայծակ, սողանք, հրդեհ, սելավ, ջրհեղեղ, քարաթափում, ուժեղ քամի-փոթորիկ: Ամեն աշխարհում մաթեստ է անցնում՝ ընտրում է առաջադրված

հարցի չորս պատասխանից մեկը: Օրինակ՝ ի՞նչ անել երկրաշարժի ժամանակ, կամ նկարներում պատկերված տարբերակներից ո՞րն է ճիշտ և այլն: Ամեն աշխարհում յոթ թեստ, ընդամենը՝ 56 թեստ: Ամեն ճիշտ հարցից հետո «Սուդեր Դավիթը» պարզ է ստանում՝ փրկարարական գույք՝ սաղավարտ, կրակմարիչ, կացին և այլն: Բոլոր աշխարհները հաջողությամբ անցնելուց հետո «Սուդեր Դավիթը» ստանում է «911» ուղղաթիռ, որով կարող է արագ օգնության հասնել ամենուր և ամենքին:

Բոլոր աշխարհներն անցնելու համար կպահանջվի մոտ 2,5 ժամ, սակայն կարիք չկա 2,5 ժամ «կպչել» համակարգչին: Խաղի կառուցվածքը թույլ է տալիս խաղալ քիչ-քիչ, մաս-մաս, ամեն օր անցնելով որոշակի հատված՝ հաջորդ օրը շարունակել կիսատ թողած մասից: Խաղն ունի մեկ լավագույնների ցուցակ, որտեղ կերևա, թե

որ դպրոցի որ աշակերտն է առավել տեղյակ անվտանգության մշակույթին:

«Սուդեր Դավիթ» խաղը հասանելի կլինի ամենաուշը հոկտեմբերի առաջին շաբաթուն: Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի և Dasaran.am-ի ղեկավարություններն այս պահին գոհ են արված աշխատանքից: Դեռազայում խաղը մշտապես կթարմացվի, կարդիականացվի: Կարող են լինել բազմամակարդակ կամ նոր խաղեր, պատկերավոր ասած, ըստ տեղանքների՝ այն վայրերի, որտեղ լինում են երեխաները: «Սուդեր Դավիթը» բնության պաշտպան, ընդդեմ անտառային հրդեհների», «Սուդեր Դավիթ» ընդդեմ շինությունների հրդեհների», «Սուդեր Դավիթ» ընդդեմ տրանսպորտային միջոցների, այդ թվում մետրոյի հրդեհների» և այլն: ■

Արամ ԶԱՔԱՐՅԱՆ

Ամբողջ աշխարհում, այդ թվում՝ Դայաստանում երեխաները և տարեցները խոցելի շերտ են, առավել ևս, եթե ոչ թե ընտանիքում են, այլ՝ հատուկ հաստատությունում՝ մանկատանը կամ տուն-ինտերնատում:

ՍԵՅՍԱՐԿ ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԿԱՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱԿՏՆԵՐՈՒՄ



33 ԱԻՆ սեյսմիկ պաշտպանության ծառայությունը կարևորում է բնակչության բոլոր շերտերի շարունակական ուսուցումը, ինչը նպաստում է սեյսմիկ անվտանգության մշակույթի ձևավորմանը:

վարժանքները՝ պատասխարման կամ տարիանման ձևով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մանկատներում և ծերանոցներում մշտապես ապրողների շատերն ունեն ֆիզիկական և/կամ հոգեբանական բնույթի խնդիրներ:

Սեյսմիկ պաշտպանության ծառայության մասնագետները մշակել են երկրաշարժից պաշտպանվելու վարքականոններ հատուկ կարիքավոր մարդկանց և նրանց խնամակալների համար, որտեղ առանձին ուշադրություն է հատկացված մտավոր և ֆիզիկական արատներ ունեցող անձանց անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու և նրանց պաշտպանությունը կազմակերպելու խնդրին:

Ուսուցումը պետք է կառուցել 4 հիմնական հարցերի պատասխանների հիման վրա.
1. Ինչպե՞ս են հատուկ կարիքներով մարդիկ (խուլ, կույր, համր) տեղեկանում արդեն մասին:
2. Ինչպե՞ս կարող է արդեն ազդել ման մարդկանց և նրանց շրջապատի վրա:
3. Ի՞նչ գիտելիքներ ունեն նրանք այն արդեն ճիշդ մասին, որոնք բնորոշ են տվյալ տարածաշրջանին:
4. Որո՞նք են հատուկ կարիքներով մարդկանց պաշտպանիչ գործողությունները մինչև երկրաշարժը, երկրաշարժի ժամանակ և երկրաշարժից հետո:
Առաջարկվող մեթոդիկական ունի հետևյալ առանձնահատկությունները.
• ընտրված հրահանգները հակիրճ են,
• արվում են համապատասխան շեշտադրումներ,
• գերծ են ավելորդ տեղեկություններից,
• ուղղված են ինքնուրույն գործե-

լու կարողություններ ունեցող մարդկանց:

Մեթոդիկայի մատուցման մեջ առանձնացվում են.

- ուսուցման փուլայնությունը, երբ ուսուցումից հետո կազմակերպվում է տագնապ-վարժանք,
- ուսուցման պարբերականությունը. ցանկալի է տարվա ընթացքում այն կրկնել:

Բոլոր մանկատների տնօրեններն ասում են, որ իրենց դերն առավել քան կարևոր է, քանի որ փոքր և հիվանդ երեխաների դեպքում իրենք պետք է ուղղորդեն նրանց արտակարգ իրավիճակներում: Տուն-ինտերնատների տնօրենները նույնպես ընդգծում են, որ իրենց մոտ բնակվող տարեցները հատուկ վերաբերմունքի կարիք ունեն:

Ուսուցանման մեր երկարամյա փորձը ցույց է տալիս, որ դասախոսությունների ժամանակ օպտիմալը երկու զեկուցումն է, առանձին ղեկավարում երեքը, քանի որ լսարանը հոգնում է և դժվար ընկալում տեսածն ու լսածը: Սեյսմիկ պաշտպանության ծառայության մասնագետները եղել են բազմաթիվ հատուկ հաստատություններում (Երևանի Մարի Իզմիրյան պետական մանկատուն, Երևանի «Մանկան տուն» պետական մանկատուն, Նոր Խարբերդի պետական մանկատուն, Գյումրիի «Երեխաների տուն», Գյումրիի «Տիրամայր Դայաստան» կենտրոն, Վանաձորի մանկատուն, Սպիտակի մանկա-

տուն, Երևանի թիվ 1 պետական տուն-ինտերնատ, Երևանի Նորքի պետական տուն-ինտերնատ, Գյումրիի տուն-ինտերնատ, Վանաձորի տարեցների) և սեյսմիկ պաշտպանության ուսուցանման ու կազմակերպման բարելավմանն ուղղված առաջարկներ ու դիտողություններ արել: Օրինակ, միջանցքի պատերին կան տարիանման սլաքներ և տարիանման սխեմաներ: Այդ սխեմաները պետք է լինեն մեկ սեյսմիկներում: Լինեն արտակարգ իրավիճակների համար նախատեսված աստիճաններ և այլն:

Սեյսմիկ պաշտպանության ծառայության մասնագետները շահառուներին են փոխանցել ծառայությունում մշակված նյութերը, որոնց յուրացումը և կիրառումը կնպաստի սեյսմիկ անվտանգության ապահովմանն ուղղված հետագա գործառնությունների առավել արդյունավետ իրականացմանը: Ի վերջո, բոլորիս նպատակը մեկն է՝ պատրաստ ուժեղ երկրաշարժին և անել ամեն ինչ, որպեսզի այն չվերածվի աղետի: ■

Հրապարակումը պատրաստվել է Հրաչյա Պետրոսյանի «Սեյսմիկ անվտանգության ուսուցումը և իրազեկումը մանկատներում և տուն-ինտերնատներում» գեկույցի հիման վրա: Զեկույցը ներկայացվել է ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի 25-ամյակին միվրված գիտաժողովին:



Ընդհանր

մեր ամենակարևոր տոն՝ սեպտեմբերի 21, Հայաստանի Հանրապետության անկախության 26-րդ տարեդարձ: Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնությամբ կառուցենք ուժեղ ու հպարտ հայրենիք: Նպատակին հասնելու համար համահայկական գործեր շատ ունենք: Եվ այդ գործերում ուրույն դերակատարություն ունեն մեր փրկարարները, որոնք ապահովում են երկրի բնակչության անվտանգությունը: Բոլոր մեր գործերում հաջողելու ենք:

Օգնում են փրկարարները

Հրշեջ-փրկարարներն արջին տեղափոխել են վանդակ

Անցած յոթ օրում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության ստորաբաժանումները արտակարգ իրավիճակների վերաբերյալ մոտ 600 ահազանգի են արձագանքել: Շատ դեպքերում փրկարարները դեպքի վայր մեկնելուն զուգահեռ տեղեկությունը փոխանցել են այլ ծառայության. շտաբօգնություն, «Վեոլիա Ջուր», էլ-ցանց, գազի վթարային ծառայություն, կանաչապատման, սանմաքրման ծառայություն, ոստիկանություն և այլն:

Գրանցվել է ավելի քան 250 հրդեհ. այրվել են տան գույք, շինությունների փայտյա կառուցատարրեր, շինանյութ, անասնակեր, բուսածածկ տարածքներ, ջերմահարվել են պտղատու և դեկորատիվ ծառեր: Հրդեհների մեծ մասը բուսածածկ տարածքներում է գրանցվել. Արագածոտն. Գեղարդի գյուղ 5 հա, Մաստարա գյուղ 30 հա, Վարդենուտ գյուղ 5 հա, Լոռի. Արմանիս գյուղ 37 հա, Գետավան գյուղ 50 հա, Պուշկինո 150 հա, Կոտայք. Գառնիի երկրաֆիզիկական դիտարանի շենքի մոտակայքում 10 հա, Հրազդանի Կաթավաճոր թաղամասում 20 հա, Ֆանտան և Ջրաբեր գյուղերի մոտ՝ 215 հա, Շիրակ. Ձորաշեն գյուղ 120 հա, Լեռնապար գյուղ 150 հա, Սյունիք. Կապան քաղաք 10 հա, Գորիս քաղաք 15 հա, Վաղատուր գյուղ 415 հա, Իշխանասար գյուղ 50 հա, Տեղ գյուղ 30 հա, Վերիշեն գյուղ 200 հա, Տավուշ. Պառավաքար գյուղ 10 հա, Ջուրական գյուղ 12 հա և այլն:

Փակ դուռ բացելու վերաբերյալ էլ 100 կանչ է ստացվել: Վատառողջ, ծանրաբաշ, սակավաշարժ քաղաքացուն բնակարանից իջեցնելու կամ բնակարանում տեղից տեղափոխելու կանչեր են սպասարկել Երևանի Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Արաբկիր, Դավի-



թաշեն, Նոր Նորք վարչական շրջանների և Կոտայքի ու Շիրակի փրկարարները: Տարբեր վայրերում արգելափակված (դիտահոր, վերելակի հորան, նկուղ, շենքի օդատար-ծխատար, մեքենայի շարժիչի տակ և այլն) մի շարք կենդանիներ են ազատվել: 10 օձ է հայտնաբերվել և տեղափոխվել անվտանգ տարածք: Գետերի և ջրամբարների ափերին արգելափակված 10 մեքենա է դուրս բերվել երթևեկի հատված:

Այլ կանչեր. Կենտրոնի փրկարարներն ահազանգ են ստացել, որ Վարդան Մամիկոնյանի արձանի մոտակայքում շունն ընկել է Գետառ գետը, դուրս բերելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: Հրշեջ-փրկարարները քաղաքացիների հետ համատեղ շանը դուրս են բերել գետից և հանձնել տիրոջը: Շենքավիթի փրկարարներն ահազանգ են ստացել, թե «Էրեբունի» օդանավակայանում շինարարական աշխատանքների կատարման ժամանակ քաղաքացին ընկել է 3 մետր խորությամբ փոսը, շտաբօգնությունը տեղում է. դուրս բերելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: Հրշեջ-փրկարարները 47-ամյա քաղաքացուն հանել են փոսից: Կոտայքի փրկարարներն ահազանգ են ստացել, որ Ծաղկածոր քաղաքի «Թփուտներ» ռեստորանի տարածքում արջը դուրս է եկել վանդակից, բարձրացել վանդակի վրա, անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: Հրշեջ-փրկարարներն արջին տեղափոխել են վանդակ: ■

Արտագնա դասընթաց ուղիուակտիվ ճառագայթների թեմայով



Սեպտեմբերի 20-ին ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ղեկավար կազմի որակավորման բարձրացման ֆակուլտետի մասնագետները դպրոցներում արդեն ռիսկի նվազեցման կրթության հարցերի վերաբերյալ վերապատրաստման դասընթաց են անցկացրել Երևանի թիվ 106 հիմնական դպրոցում, որին մասնակցել են 8-րդ և 9-րդ դասարանի աշակերտներ:

ՃԿՊՄ մասնագետները խոսել են մեր շրջապատի ռադիոակտիվ ճառագայթների մասին: Աշակերտներին հետաքրքրում էին ճառագայթման թե՛ բնական և թե՛ արհեստական աղբյուրները, արդյո՞ք Մեծամորի ատոմակայանը վտանգավոր է շրջակա միջավայրի համար:

Աշակերտները տեղեկացվել են, որ ճառագայթային անվտանգության հիմնական նպատակն է ապահովել մարդկանց և շրջակա միջավայրի պաշտպանությունը իրենց ճառագայթման վնասակար

ազդեցությունից, նման վթարային իրավիճակներում իրենց ճառագայթումից մարդկանց պաշտպանության նպատակով իրականացվող արագ գործողություններ են. վահանաձև գեղձի արգելափակում, պատսպարում, տարահանում:

Թե՛ ատոմակայաններն աշխատում են նորմալ ռեժիմով, ռադիոակտիվ արտանետումների հավանականությունը շրջակա միջավայրի քիչ է:

Այս տարի ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ղեկավար կազմի որակավորման բարձրացման ֆակուլտետի մասնագետները վերապատրաստման 86 դասընթաց են անցկացնելու, որից 15-ը՝ արտագնա: 56 դասընթաց արդեն անցկացվել է, յոթը՝ արտագնա: ■

Սիրուշ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՃԿՊՄ ղեկավար կազմի որակավորման բարձրացման ֆակուլտետի դասախոս

Իմացիր և օգնիր

ԱՆՍԱԿԱՐԳ ԾՆՈՒԹՅՈՒՆ

Բարձր ջերմաստիճաններ. ջերմային հյուծում

Ջերմային հյուծումը շոկի տեսակ է, որը զարգանում է առատ քրտնարտադրության հետևանքով մարմնի ջրազրկումից: Տաք միջավայրում երկարատև լարված աշխատելու ընթացքում քրտնարտադրությունն ուժեղանում է: Դրա հետևանքով մարդը մեծ քանակությամբ հեղուկ և աղեր է կորցնում: Ըոգ օրվա ընթացքում մարդը քրտնելու արդյունքում կարող է կորցնել մինչև 10 լիտր հեղուկ: Առատ քրտնարտադրության հետևանքով մարմնում նվազում է արյան ծավալը: Կենսական կարևոր օրգանների արյունամատակարարումն ապահովելու համար նեղանում են մաշկի և վերջույթների արյունատար անոթները: Ջարգանում է շոկային իրավիճակ ջերմային հյուծում: Ջերմային հյուծմանը կարող են նախորդել ջերմային ցնցումները: Ջերմային հյուծումն ավելի հաճախ հանդիպում է մարզիկների, հրշեջների, շինարարների և նրանց շրջանում, ովքեր տաք հագնված երկար ժամանակ գտնվում են շոգ միջավայրում և բարձր խոնավության պայմաններում: Տուժաժի մարմնի ջերմաստիճանը կարող է լինել նորմալ կամ սովորականից փոքր-ինչ ցածր կամ բարձր: Ջերմային հյուծման նշաններն են. սառը, խոնավ, գունատ մաշկ, գլխացավ, գլխապտույտ, թուլություն, ծարավի զգացում, սրտխառնոց, փսխում, արագացած, թույլ անոթազարկ, հաճախացած շնչառություն:



Ջերմային հյուծման դեպքում տուժածին հորդորեք դադարեցնել ֆիզիկական աշխատանքը և նրան տեղափոխեք հով, սովորական վայր: Պառկեցրեք տուժածին, բարձրացրեք նրա ոտքերը մոտ 25 սմ, թուլացրեք ճնշող կապերը և թեթևացրեք հագուստը: Եթե տուժածը գիտակից վիճակում է, սառը հեղուկներ, այդ թվում՝ հանքային ջրեր տվեք: Ահազանգեք շտաբօգնություն, վերահսկեք տուժածի վիճակը, գրանցեք տվյալները և դրանք փոխանցեք դեպքի վայր հասած բժիշկներին: ■



Մեր փրկարարները մասնակցում են Քիշնևում անցկացվող EU MOLDEX 2017 միջազգային վարժանքին: Մանրամասները՝ նրանց վերադարձից հետո: